Աղջի անաստված,
Նըստիր վրանում,
Ի՞նչ ես դուրս գալիս
խելքամաղ անում,
Աշուղ ես շինել,
չեմ հագստանում:

Խաղեր կապելով,
Ջոլեր չափելով,
Ոչխարըս անտեր,
Ընկել եմ հանդեր:

Աման, էրեցիր սիրտըս քո սիրով,
Ոտըս կապեցիր թել-թել մազերով,
Էլ չեմ դիմանա, կըփախցնեմ զոռով:

Ա'յ սարի աղջիկ,
Ա'յ սիրուն աղջիկ,
Ա'յ դու կարմրաթուշ,
Թուխամազ Անուշ:

Քու հերն ու մերը թե որ ինձ չըտան՝
Արին կըթափեմ ես գետի նման,
Սարերը կընկնեմ, կորչեմ անգյուման:

Ա'յ սև աչքերով,
Այ ծով աչքերով,
ՈՒնքերըդ կամար,
Աղջիկ քեզ համար...